իսկ եթէ բարի՝ ընդէ՞ր հարկանես զիս, ըստ որում ասաց Տէրն Մաղքոսի։ Եւ ո՞ւր դնես զհրամայեալն Տեառն՝ Բարի արարէք ատելեաց ձերոց։ Իսկ դու որ ընտանեացդ հաւատոյ զչարիս նիւթես՝ քանի՛ցս դառնագոյն պատիժ վճռեալ է։ Դու Ադամայ, Դաւթի եւ Սողոմոնի գլորմանց լինիս մեղադիր, իսկ մեղադիրդ ի քէն խոտորիս եւ գերան քո ի քեզ ոչ երեւի, որ է անթողելի։ Դու ծանեար զբանս սուրբ Գրոց թէ Հոգին Սուրբ ի մախացողս ոչ հանգչի, եւ ոտնահար եւս լինիս չնորհաց Հոգւոյն Սրբոյ։ Դու ոչ երկնչիս ի բանից Տեառն որ հրամայէ՝ Հակառակողին Հոգւոյն Սրբոյ ոչ թողցի յաշխարհի եւ ի հանդերձելումն։ Դու ի զղջումն գաւանութեան՝ Մախանօք յաչախանօք՝ ասելով մեղանք զնոսա խոստանաս, եւ դարձեալ զնոյն լիով ծրարեալ ի սիրտ քո դառնութեամբ եւ ժայթքես համարձակ յատենի՝ գործով կատարեալ։ Աւա՜ղ մարդատեցութեան, նենգաւորութեան՝ որ ընդ արիւնահեղս եւ ընդ չնացօղս դատապարտէ Տէրն. աւա՜ղ իմաստատեաց անզգամութեանդ՝ որ ոչ գիտես զի՛նչ գործես։

Արդ կատարելոյդ պարտ է զպակասութիւն իմ լնուլ ըստ խրատու առաքելոյն։ Եւ զի խնդալ հարկիս, զի Եկեղեցի նոր երգօք պայծառանայ, որպէս Շնորհալին նուագէ. Նոր երգս առեալ նորոգողին։ Եւ զի թէ յերգս իմ գտանիցի սխալ ինչ՝ պարտ էր քեզ ուղղել, եւ թէ յեղանակս լցէ թերութիւն՝ հարկ է քեզ կարգաւորել։ Եւ զի յայսմ է կատարեալ բանն թէ Փողս հարաք եւ ոչ կաքաւեցիք, ողբացաք եւ ոչ լացիք։ Զի թէ ընդ թօփիւք եւ վէգօք թօփանիւք եւ ճուկիւք, մանկըռօք եւ չանկըռօք, խաղովք մանկանց ի սադերօթ զբօսնուաք՝ չչնջէիք. եւ արդ որ երգօք Եկեղեցւոյ կառավարիմք՝ ծաղր առնէք։ Եւ զի անարգանք քո ոչ է առ իս՝ այլ չնորհաց Հոգւոյն Սրբոյ, որպէս Պողոս վկայէ. Ոչ կարէ ոք ասել տէր զՅիսուս՝